ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ն ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/54 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
14	-	-	Բարձր արագությամբ խառնիչ՝ միկրոպլանշետների համար: Կիրառելի է գրեթե ցանկացած փորձարարական կիրառության մեջ՝ ապահովելով միկրոպլանշետներում, ՊՇՌ պլանշետներում, խորը ակոսներով պլանշետներում և փորձանոթներում ռեագենտների կարգավորվող խառնում: Հնարավոր է խառնել 0.2-ից 2 մլ փորձանոթներ և ցանկացած ծավալի հեղուկներ՝ մինչև 50 մլ՝ վորտեքսային խառնման միջոցով: Սարքը պետք է լինի կոմպակտ և հարմար՝ անհատական օգտագործման համար: Խառնիչը պետք է համալրված լինի մեկ փորձանոթի համար նախատեսված վորտեքսային գլխիկով: Սարքը պետք է հնարավոր լինի գործածել սառը սենյակներում կամ ինկուբատորներում: Խառնիչը պետք է ներառի պուլսային խառնման ռեժիմ, որի հիմքում պարբերաբար ազդակով խառնումն է. փորձանոթը արագացվում է սահմանված արագությամբ, պահում է այն 3 վայրկյան, ապա դանդաղում մինչև զրո: Այս շարժումը կրկնվում է մինչև ժամանակաչափի ավարտը: Այս մեթոդը ապահովում է մասնիկների մշտական վերականգնում փորձանոթի ներսում, քանի որ

			արագացումը միշտ փոփոխվում է: Արագության կարգավորման տիրույթ՝ առնվազն 300–3,200 պտույտ/րոպե: Խառնման նախադրված ռեժիմներ (առնվազն)՝ - վորտեքս՝ առնվազն 3200 պտ/րոպե, - կոպիտ՝ առնվազն 2600 պտ/րոպե, - միջին՝ առնվազն 1800 պտ/րոպե, - փափուկ՝ առնվազն 1000 պտ/րոպե, - կարգավորվող: Թվային ժամանակաչափ՝ առնվազն 0–60 րոպե (15 վրկ քայլով)/անընդհատ: Ժամանակի ավարտի ազդանշանի առկայություն: Շարունակական աշխատանքի առավելագույն տևողություն՝ առնվազն 8 ժամ (ընդմիջումներով): Խառնման ուղեծիր՝ 3 մմ: Արագացման ժամանակ մինչև առավելագույն արագություն՝ առնվազն 5 վրկ: Մաքսիմալ բեռնվածություն՝ առնվազն 0.3 կգ: Պուլսային խառնման ռեժիմի առկայություն: Վորտեքս ֆունկցիայի առկայություն: Պլատֆորմ՝ միկրոպլանշետների համար: Սարքը պետք է լինի նոր և չօգտագործված: Սարքի հետ պետք է տրամադրվեն բոլոր անհրաժեշտ պարագաները լիարժեք աշխատանքի համար: Սարքի տեղադրումը, գործարկումը և անձնակազմի ուսուցումը պետք է իրականացվի մատակարարի կողմից: Երաշխիքային ժամկետ՝ առնվազն 2 տարի: Արտադրողը պետք է ունենա (առնվազն)՝ ISO 13485 հավաստագիր: CE հավաստագրի առկայություն՝ առնվազն հետևյալ դիրեկտիվաներով. LVD 2014/35/EU , EMC 2014/30/EU ,Directive 2011/65/EU RoHS3 2015/863/EU, WEEE 2012/19/EU:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ЭКСТРА МОТОРС в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЗЦЧ-ЕЦЖЦПЗДР-26/54 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	марка	наименование производителя	технические характеристики
14			